ԵԹԵ ՏԵՐԸ ՉՇԻՆԻ ՏՈՒՆԸ...

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՍԱՂՄՈՍ 127:1-5

1 Եթե Տերը չշինի տունը, զուր են աշխատում նրա շինարարները. եթե Տերը չպահպանի քաղաքը, զուր է անքուն լինում պահապանը: 2 Զուր է ձեզ համար կանուխ վեր կենալը, ուշ հանգստանալը. դուք հացը ցավով եք ուտում. ինչո՞ւ. որովհետև նա իր սիրելիին է քունը տալիս:

Եթե Տերը չշինի տունը...

Զուր են աշխատում նրա շինարարները...

Զուր է անքուն լինում պահապանը...

Զուր է ձեզ համար կանուխ վեր կենալը...

- ***Այս Սաղմոսի առաջին մասում խոսվում է այն մասին, թե ինչպես առանց Տիրոջ բաներ անելն ավարտվում է ունայն/անօգուտ/անիմաստ ջանքերով:***

Ո՞վ ավելի լավ գիտի ապարդյուն ջանքերի մասին, քան Սողոմոն թագավորը, ով գրել է Ժողովողի գիրքը և նկարագրում է իր կատարած մեծ բաները, որոնք, ի վերջո անիմաստ են դարձել: Ունայնություն բառը Սողոմոնն օգտագործել է 37 անգամ Ժողովողի գրքում:

Ժողովող 1:2 – Ունայնություն ունայնությանց, ասաց Ժողովողը, ունայնություն ունայնությանց, ամեն ինչ ունայնություն է:

I. ԱՍՏՎԱԾ Է ՄԵՐ ՏՆԵՐԸ ԿԱՌՈՒՑՈՂԸ:

Աստծու՝ ինձ տված շնորհի համաձայն իմաստուն ճարտարապետի պես հիմքը դրեցի, բայց ուրիշն է կառուցում նրա վրա: Բայց թող ամեն ոք զգույշ լինի, թե ինչպե՞ս է կառուցում: Որովհետև ոչ ոք դրվածից տարբեր հիմք չի կարող դնել, որ Հիսուս Քրիստոսն է: (Ա Կոր. 3:10,11):

- ***Ո՞ւմ վրա եք կառուցում ձեր տունը... կյանք, կարիերա, բիզնես և այլն...***

Դուք էլ կենդանի քարերի պէս շինուեցէք հոգեւոր տաճար... առաքյալների ու մարգարեների հիմքի վրա շինված, որի անկյունաքարը Քրիստոսն է. (1 Պետ. 2:5, Եփ.2:20)

III. ԴՈՒՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՔ ՁԵՐ ՏՈՒՆԸ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻ և ՆՐԱ ՏՎԱԾ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ:

*Մատթեոս 7:24-27 – **24** Արդ, ամեն ոք, ով լսում է իմ այս խոսքերն ու դրանք կատարում, կնմանեցնեմ մի իմաստուն մարդու, որն <u>իր տունը կառուցեց ժայռի (Petra) վրա</u>: **25** Անձրևը եկավ, գետերը հորդեցին, քամիները փչեցին և զարկեցին տանը, բայց այն չկործանվեց, որովհետև ժայռի վրա էր հաստատված: **26** Իսկ ամեն ոք, ով լսում է իմ այս խոսքերն ու դրանք չի կատարում, կնմանվի մի անխելք մարդու, որն իր տունը կառուցեց ավազի վրա: **27** Անձրևը եկավ, գետերը հորդեցին, քամիները փչեցին, զարկեցին տանը, ու այն կործանվեց, և նրա կործանումը մեծ եղավ:*

- ***Այն, ինչ կառուցված չէ Հիսուսի վրա, անարժեք է և ենթակա է ոչնչացման:***

  Սաղմոս 11:3 – Եթե <u>հիմքերը քանդվեն</u>, արդարն ի՞նչ պիտի անի:

- ***Հիսուսն իր տունը կառուցեց անսասան/ամուր հիմքի վրա:***

  Մատթեոս 16:18 – Ես էլ քեզ ասում եմ, որ դու Պետրոս ես, և այդ վեմի <u>(Petra)</u> վրա եմ կառուցելու իմ եկեղեցին, և դժոխքի դռները (դարպասնե՛ր) նրան չեն կարողանա հաղթել:

3 Ահա որդիները Տիրոջ ժառանգությունն են, և որովայնի պտուղը՝ նրա վարձը: 4 Ինչպես որ նետերն են զորեղ մարդու ձեռքին, այնպես են երիտասարդ որդիները: 5 Երանի՜ այն մարդուն, որ իր կապարճը լցրեց նրանցով. նրանք պիտի չամաչեն, երբ թշնամիների հետ խոսելու լինեն դռան (դարպասի) մեջ:

III. ԱՅՍ ՍԱՂՄՈՍԸ ՍԿՍՎՈՒՄ Է ՏՆԻՑ ԵՎ ԱՎԱՐՏՎՈՒՄ ԴԱՐՊԱՍՆԵՐՈՎ:

Դատապարտեք մեղքը ձեր տան դարպասների մոտ:

Ծննդոց 22:17 – քեզ օրհնելով կօրհնեմ և երկնքի աստղերի ու ծովեզերքում եղող ավազի չափ կբազմացնեմ քո սերունդը, և քո սերունդը կժառանգի իր թշնամիների դուռը (դարպասը):

Մատթեոս 16:18 – և դժոխքի դռները (դարպասնե՛ը) նրան չեն կարողանա հաղթել:

Հայտնություն 3:12 – Հաղթողին իմ Աստծու տաճարում սյուն պիտի դարձնեմ, ու նա այլևս այնտեղից դուրս չի գալու: Նրա վրա պիտի գրեմ իմ Աստծու անունը և իմ Աստծու քաղաքի անունը՝ նոր Երուսաղեմի անունը, որ իջնելու է երկնքից՝ իմ Աստծու մոտից, և իմ նոր անունը պիտի գրեմ:

IV. ՍԱՂՄՈՍ 128-Ը ՍԱՂՄՈՍ 127-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆ Է:

- ***Սաղմոս 128-ը նկարագրում է այն օրհնությունները, որոնք գալիս են մի ընտանիք, որտեղ Աստծուց վախենում են, սիրում և հարգում են:***

  Սաղմոս 128:1-6 – 1 Երանի՜ բոլոր նրանց, որ վախենում են Տիրոջից և գնում են նրա ճանապարհներով: 2 Իհարկե, դու կուտես քո ձեռքի վաստակը. երանի՜ քեզ, որ դա լավ է լինելու քեզ համար: 3 Կինդ պտղաբեր որթի պես կլինի քո տանը, որդիներդ՝ տնկված ձիթենիների պես քո սեղանի չորս կողմը: 4 Ահա հենց այսպես է օրհնվում այն մարդը, որ վախենում է Տիրոջից: 5 Տերը Սիոնից կօրհնի քեզ, և քո կյանքի բոլոր օրերին կտեսնես Երուսաղեմի բարությունը: 6 Քո որդիների որդիներին կտեսնես. խաղաղություն թող լինի Իսրայելին:

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: